

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Գ Ի Ր

Սենն օր կհրատարակուի : — Հասը 10 փարայ է : — Պօլիս բաժանորդ բլլալ ուղողը մէկ աքճաթ Մէճրա պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուոց համար, թղթաարութեան ծախքէ ազատ բլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լիւսդրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ օր եւ է գրու թիւն պէտք է լողղի առ Տնօրէնն Ի Ղալս թիւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից Նոր Գրատունը :

Մ. Չ Գ Ա Յ Ի Ն

Երէկ խառն ժողովոյ և Տնտեսական խորհրդոյ միաբան հաւանութեամբ վերջապէս որոշուեր է որ՝ «նուէր» անունով խնդրուի, ազգային ելուստից ներկայ տարւոյս 100,000 զուրուշի չափ բացը գոցելու համար ազգայիններէ հաւաքուելիք ստակը : Այս որոշման վրայ, ամեն. Տեղապահ հայրն ու խառն ժողովոյ մեծ. էֆէնախները անմիջապէս փութացեր են մէկմէկ գումար նուիրել և այսպէս օրինակ բլլալ ուրիշներուն : Չկրցանք խմանալ թէ ժողովական էֆէնախներն ինչ գրուած են, բայց լսեցինք որ Տեղապահ սրբազանը բարեհաճեր է 300 զուրուշնուիրել : Ի հարկէ Տնտեսական խորհրդոյ մեծ. անդամք ալ խառն ժողովոյն օրինակին հետեւած բլլալու են ազգասիրաբար :

Մներկվիա եւր թէ՛ առհասարակ ամեն կարգի ազգայինք ամենայն յօժարութեամբ կհամակցին այս հանգանակութեան, նկատելով թէ՛ ազգային ներկայ առժամանակեաց կուռաւարութիւնը ազգին աջակցու-

թեան և օգնութեան արժանի է. նրկատելով թէ՛ առանց դրամի գործել անհնար է. նկատելով թէ՛ խառն ժողովն ջանող իր է ազգային սահմանող բութեան վերաքննութեան գործը շուտով աւարտելու. նկատելով թէ՛ այս առժամանակեաց վարչութեան օրով ազգային ամենածանր խնդիրներ կիրարդարուին, ինչպէս Չարամեճագի և Մշոյ խնդիրները ուրոնց համար վերջին օրերս ինչ ազգօգուտ տնօրինութիւններ եղած բլլալը երէկ օրագրոյս միջոցաւ խիստ մեծ ուրախութեամբ ծանուցինք : Ահա՛ այս ամեր նկատողութեան առնելով, ամենքս պարտաւոր եմք մեր կարողութեան չափ մասնակցիլ յիշեալ հանգանակութեան, և քաջալերել թէ՛ ամեն. Տեղապահն և թէ՛ առժամանակեաց վարչութիւնը, որպէս զի ազատ մնալով դրամական հոգերէ, ազգին անգործութեան ու յառաջադիմութեան վերաբերեալ կենսական խնդիրներով միայն զբաղին :

— Խառն ժողովն Տնտեսական խորհրդոյն յանձներ է որ աչքէ անցունէ Գարակեօսթիւկի հին հաշիւները : Մեք գիտէինք թէ հանգուցեալ բա-

բունակ պէյի ատենապետութեան օրով ըմբոստեմ է յիշեալ հաշուոց քննութիւնը, որ քիչ անհամոզ տարածոց նութեանց առիթ չէր եղած նոյն ատենը : Փափաքելի է որ արգի Տընտեսական խորհուրդը ժամ յառաջ կատարելով իրեն եղած այս յանձնարարութիւնը, ի պաշտօնէ ծանուցանէ քննութեան ճիշդ արդիւնքը, որ պէսզի Շահմանճեան մեծ : Աւետիս աղայի արժանիքը լաւ ճանչցուի, որ շատ տարիներ ծառայած է յիշեալ թաղին մէջ, սակայն հաշուոց խնդրոյն առթիւ դժբաղդաբար այլ ընդայլոյ կարծիքներ երած են իւր վրայ, որոնք դժուարհաստաչի կթուին մեզ :

— Նիկոսիոյ զոխառաջնորդ Նիկոզոս եպիսկոպոսը՝ որ ամեն մ'ի վեր մոյրաքաղաքս կգանուէր, այս շաբթու գարձաւ իր վիճակը : Չեմք դիտեր թէ՛ Նիկոզոս եպիսկոպոսը ազգային վարչութեան կոզմանէ կանչուեցան, իր վրայ եղած ամբաստանութեանց համար պատասխան ու բացատրութիւն տալու . և թէ՛ արդեօք արգարացան . թէ՛ գնաց իզմիս, այն ընդարձակ վիճակը, գարձեալ առջինին պէս հախուելու : Նիկոզոս եպիսկոպոսը թո՛ղ հաւատայ որ ինչպէս իւր պայթակցական արարմանց նոյն պէս և հասարակաց օգտակար գործոյր վրայ հրանդարակաւ խօսելու պատրաստ է փունջը, իրեն դէմ որ և է մասնաւոր ատելութիւն չունենալով :

« Խորէն քահանայ փէհլիվանեան » ստորագրութեամբ նամակ մը տեսանք Մատիսի մարտ 4 թի օրաթերթին մէջ : Անի, իսկիւ տարի Նէնիմահալէի վար-

ժարանին նկատմամբ օրադրոյս 27 թրթութուովը ամենայն լրջութեամբ և բարեմտութեամբ գրուած մէկ քանի տողերուն « բացատրութիւն տալու » ելեր է, յիշեալ վարժարանին « շալկերոտայ հսկողութիւնը առժամանակեայ կերպիւ իրեն յանձնուած ըլլալուն և հանդատատուութեան պաշտօն վարելուն պատճառաւ » :

Տ. Խորէն քահանային իր բացատրական նամակին մէջ անդ մը փունջի գրութեան համար կըսէ թէ՛ « Երբէք ճշգրտութիւն մը չենք նշմարեր և հեռուարայր ծայրէ ի ծայր սուտերով և զրպարտութիւններով լցուած է » : Ուրիշ անդ մ'ալ կըսէ թէ՛ « սըխալու երեւակայական են » :

Գասատուի մը, վարժարանի հշկողի մը, և վերջապէս՝ քահանայի մը գրութեան այս սճին սրչափ մեղադրանայ արժանի ըլլալը խահական ընթերցողին՝ իմաստասիրութեան թողլով, մենք միայն բանական կհամարինք ամենայն քաղաքավարութեամբ Նորին արժանապատուութեան հարցունել թէ՛ կուզե՞ որ փունջն իր նոյն տողերուն — թէ՛ և իբր իլրոյ հրատարակած է — ճշգրտութիւնը և հաւատարիմ աղբիւրներէ առած ըլլալը անպարտաւանելու համար այնպիսի անձանց անուններ նշանակէ, որոնք իր ատժանանակեայ կերպիւ հսկած վարժարանին հետ խիտտ մտ յարաբերութիւն ունեցած են և յարդ ունին : Կներէ՞ որ անխոհեմաբար յակննէ յանուանէ նշանակենք այն թաղական խորհրդականին անունը, որ իրերաւարժական գործիքներուն համար « նէ տիր պունլար, տէֆ խախն » ըսած է : Տ. Խորէն քահանային թոյլ

կուսայ մեզ որ հաստատենք թէ՛ մե-
ծապատիւ ասքթոր Աղասեան « իւր
անձնական գործոց զբաղմանց առ-
թիւ » հրատարած չէ, այլ՝ իւր ան-
բնական սրաչածնին մէջ ուրիշներուն
ալ ձեռք երկնցունելուն առթիւ ձը-
ղած էր վարժարանը :

Տ. ֆէհլիխներան, եթէ փունջի
նոյն աղբերուն լրջութեան պարզու-
թեան և յարդական ոճին քիչ մը ուշ
գնելու շնորհն բրած ըլլար, — սլա-
րազ տեղը չէր յոգնէր բացատրու-
թիւններ յօրինելու, և բերնէն ան-
գիտարար հայհոյութիւններ դուրս
ստելու : Սրղեօք երբ պիտի ըլլայ որ
մեր մէջ քննադատութիւններն ու վի-
ճարանութիւնները առանց հայհոյա-
նաց կատարուին :

Եկնիմահայլէի վարժարանին առ-
ժամանակեաց հսկող ու դատաւոր քա-
հանայն թող ապահով ըլլայ որ փուն-
ջի գլխաւոր փառիքն է ազգին մէջ
յառաջողէմ ու բարեկարգ վարժա-
րաններ տեսնել, և թէ՛ այս փառիքն
է որ աղային վարժարանաց վրայ
բարեմտարար խօսիլ կնիք զինքը : Հե-
տեաւար՝ երբէք չցաւիր երբ տեսնէ
որ այսպէս երբեմն ալ անդուռն բե-
րաններ շարաշար կմեկնեն իւր ըսած-
ները :

ԻՍՏԱՆԻ ԼՈՒՐՆԵՐ

Երէկ սոխորահանէն տելի շքով
կատարուեցաւ Սէլանիլդի հանդէսը :
Կայլէսի իշխանը անսնելու ելեր է այս
հանդէսը :

Նորին բարձրութիւնը մայրաքա-
ղաքս մտած օրը բարձ. Եուսուֆ իզ-
ղէտաին էֆէնտին ալ նաւով դիմաւո-

րելու գացեր է, և օդտտ . Սուլթա-
նը իշխանուհւոյն թեւը մտած տանը
Եուսուֆ էֆէնտին ալ իշխանին ձեռ-
քէն բռնած է եղեր :

Իշխանը մինչև հիմա երկու ան-
գամ գացեր է Նաուսի թատրոնը :

— Սրօրատեան կղզեաց վրայ հե-
տեալ տեղեկութիւնը կարեւոր կհա-
մարիմք հրատարակել Լէվլենթ Հէրբե-
տէն քաղելով :

« Այս կղզիները 13 հատ են . Սի-
մի, Հալքի, Սթամբուլիա, Մքարբան-
թօ, Սթանքիօ, Գալիմնօ, Լիմնօ, Լէ-
րօ, Պաթմոս, Նաքսիօ, Բիսքօրի-
Քասօս և Նիքարիա : Աս կղզիները՝
ուր 100,000էն աւելի ժողովուրդ կայ,
գրեթէ բոլորն ալ յունարեակ և
անջրդի են : Կղզեցիք հին աստեղ-
ի վեր ծովային վաճառականութեան
և նաւարկութեան կարաւային . և
վարպետ լուղորդ ըլլալով կրեաէի և
Ասորեանանի ծովեզերքներէն սպունգ
կհանեն : Աս բնակիչները մտնաւոր
սահմանագրութեամբ կկառավարուին,
և ժողովրդեան քուէովը կընտրուին
խորհրդարանին անդամք, որոնց ձեռ-
քն է բոլոր կղզեաց վարչութիւնը :
Ամէն կղզիի մէջ տաճիկ միաւիշներ
կան, որոնք յոյն ժողովոյն սրտումնե-
րը կգործադրեն : Անանկ սր օսման-
եան կայսրութեան արուելիք սուր-
քը և գանձուց պաշածը ամբող-
ջապէս այս ժողովականաց ձեռքն է :
Այս սուրքը շատ թեթիւ բան մէ,
բազմատեղով Սրօրատեան կղզեաց
ունեցած հասոյթին . և յերաւի մի-
նակ Սիմի կղզին որուն մաքսը տարին
228,000էն պակաս չբերէր, 44000 դո-
րուշ սահմանեալ սուրք մը կուտան,
որ մասին կըսուի :

Ասկէց քանի մը տարի առաջ երբ Արշիպեղայոսի կղզիները Աեաեմի փոխուեցան, այն ատենուան կուսակալը շատ ջանաց աս կղզեաց ասհմանագրութիւնը քիչ մը փոփոխել, որպէս զի ուղղակի կեդրոնական վարչութենէ կախում ունենան, և գանձուքն եկամուտը աւելնայ: Եւ որոշուեցաւ որ այս ազգաւ իշխանութիւնը Կաթողիկոսի և Կաթողիկոսի մը ժողովոյն բոլոր որոշումները աչքէ անցնեն: Ասոնց հետ մէկտեղ մարտի և ուրիշ հասցիները գարձեալ կղզեցւոյ յանձնուին. միանգամայն կարհանչուէր որ ծխախոտի, ալի, գինիի տուրքը՝ որ « բուսումնաթը միւշթէմէա » կըսուի, առնուի: Այս նոր որոշումները գործադրուելու համար այն ատենուան կուսակալը իւր Կաթողիկոսի Սրբապետան կղզիները, և երբ գաննք համոզել չկրցաւ, զինոր զօրութեամբ հետզհետեւ իրան բերելու ջանաց. այլ ի գուր, կղզեցիք փոխանակ փոխնալու, գէմ գրին, անանկ որ կեդրոնական վարչութիւնը ստիպուեցաւ յարմար առիթի մը թողուլ որպէս զի այս որոշումները գործողութիւն: Արդ՝ նոյն որոշումները ևն որ այս անգամ ի. Գուռը կատրհի Սրբապետան կղզեաց համար գործադրել նոյն խի անդոյն կուսակալին ձեռամբ:

— Սուա կհանեն այն լուրը որով կըսուէր թէ Գաղղիա ճանկատան և Ռումանիա բանակցութիւններ կրնեն Դանուբեան իշխանութեանց մէջ եղած դռնադրութիւնները աւելու համար:

— Վեցամեայ արձակուրդը ար

ածնութիւնն ունեցող դաղղիացի զինւորներուն իրենց դնդերը գաւառու համար հրաման եղած ըլլալով, պատերազմ կյուսացուէր սակայն այս կարծիքը անտեղի կհամարուի:

— Արեւայի գէպը մը պատահեր է Փարիզի մէջ: Ինչպէս թահան մարմիններ պատրաստելու յատկացեալ տեղի մը մէջ (լապորաթումար) որ Պ. Ֆոնթէնին էր, Քեթրառ որ Գոթա ամանէ աման լեցուելու ատեն պայթում մը կպատճառու յանկարծ: Այս գործարարի կամ ուր նոյն տեղոյն շարժը գըսնուած աները յօգս կբարձրանան իրենց բնակիչներովը. չորս գործաւորներ որ հոն այս քիմիական մարմինը ամանէ աման կպարպէին, կմեռնին, որոնց հետ նաև Պ. Ֆոնթէնին ՉԱ տարեկան միակ որդին: Փողոցէն անցնողները ծանր կվիրաւորին և խել մը կանայք յօգս կբարձրանան: Փողոցին մէջ տան մը տանիքը դռնուող գործաւորները որ կզմնոր շարելու կղբաղէին, Քեթրառ որ Գոթաին պայթում մէն պատճառած ցնցումովը մազ կը մնայ որ վար իյնան, եթէ սիրա չընեն եղեր ծխներուզի մը փաթիթուելու: Չգիտցուիր թէ ինչպէս պատճառած է այս պայթումը. Պ. Ֆոնթէն իսկ չէ կրցած հաստատել. միայն սրտաւիր յայտնի է որ այս մարմինը ամանէ աման պարպուելով որ և է գէպը մը չը կրնար պատճառել: Արդեօք սիկառի մը կրակէն և կամ բիքրաթ աը բօթասով լի ամանը գետինը իյնալէն առաջ եկած էր այս գէպը. ոչ ոք կըրցած է հաստատել: Միայն սրտաւիր գիտէնք որ « Եր Քեթրառ » ուսկից կընուի Քեթրառ որ Գոթա, շուտով օդին շարժէին հետ կմիանայ:

ՏԵՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ

Հ. Ս. ԱԼԱՅԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. Ե. ԲԻՐԲՅԱՆ